


03.05.2013

00 AUG 2010



ԵՐԿԱՄՄՍԵԱՅ ՀԱՅՈՒԹ  
ՄՀԱԿՈՅՑ ԿԱ ՏԵՇԱԲՈՒ  
ՊԱՏՄՈՒԻԹՈՒՄՆԱՅ



Խմբագիր՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1.

1934

ՅՈՒՆԻԱՐ-ՓԵՏՐԻԱՐ

ԴՈՒԲԻԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

## ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

**Զկայ աւելի ախուր ու ցաւալի ճակատագիր, քան այն ինչ ներկայացնում են երբեմնի նիւթապէս ու հողեպէս հարուստ և այժմ մեռած դաղթահայ կենտրոնները։ Եթէ փառաւոր շնչքերի բեկորների ու աւելակների մէջ պատելը անչափ թափիծ է առաջ բերում, աւելի դառն մտքեր է յարուցանում, երբ մարդ տեսնում է երբեմնի հոյակապ մշակոյթի փոխարէն՝ նոյն դաղթավայրի այլասերումը, ուժացումն ու քայլքայումը։ Ո՞ւր է նախկին տնտեսապէս բարգաւաճ ու մշակոյթի բարձր աստիճանին հասած Լեհաստանի հայութիւնը իր փառաւոր եկեղեցական շնչքերով, ուսումնարաններով եւ մինչեւ իսկ դպրոցում շինած առաջին հայ թատրոնական բեմով (1668թ.)։ Ո՞ւր է Ռումանիայի, Հունգարիայի, Նոր-Ջուղայի, Մաղրասի, Կալկաթայի հայ դաղութի ատենով հարուստ տնտեսական ու մտաւոր կեանքը՝ տպարաններով, ընկերութիւններով եւ հայ սուաջին լրագրով։ Ի՞նչ մնաց Ղրիմի փառաւոր դաղթահայութիւնից, որ մի քանի դար ծաղկեցրեց ու շնչնցրեց թերակղզին եւ այնքան նշանակութիւն ու բարոյական ոյժ ստացաւ, որ միջին դարերում երողացիներից կոչւեց *Armenia Maritima* (Ծովային Հայաստան)։ Բոլոր այդ վայրերը երբեմն ունէին հայաշատ ու հայախօս քաղաքներ ու գիւղեր, հայ գիւղացիութիւն, հայ արհեստաւոր դաս, ցամաքային ու ծովային վաճառականութիւն, բազմաթիւ խանութներ, շահմարաններ, հոյակապ եկեղեցիներ, վանքեր, վարժարաններ։ Այս բոլորի փոխարէն այսօր տեսնում ենք երբեմն հպարտ ցեղի օտարացած, անհարազատ**

576



500 - 2001

ու անհայտիօս թշւառ բեկորներ, ամայի ու տխուր չէնքեր, օտարի ձեռքը անցած հարուստ կալւածներ :

Համարեա միշտ կրկնւել է պատմական միեւնոյն երեւոյթը . հայ գաղութը հասնելով իր զօրութեան բարձր զարդացման շրջանին՝ ընկել է արտաքին ուժերի հարւածի տակ եւ բնազդօրէն մի պահ դիմադրելուց յետոյ, նահանջել կամ խորտակւել է ստացած հարւածի ծանրութիւնից :

Անշուշտ, արտաքին վտանգը տարբեր միջավայրերում եղել է տարբեր . հայ գաղութի յառաջացման գլխաւոր խոչընդուռ հանդիսացել է նախ եւ առաջ օտար բիրտ ոյժը, դրսից եկած հորդաների բրանութիւնը, աւերն ու տիրապետութեան տենչը : Նոյնքան մեծ բացասական դործօն է եղել եւ շրջապատի օտարազգի աւելի հարուստ մշակոյթը եւ տիրող պետութեան ընդգրկած քաղաքականութիւնը : Յաճախ հայ գաղութը տարբալուծող օտար ոյժը եղել է անտեսանելի . նա թափանցել է անզգալի կերպով հայ գաղութի հոգեկան կեանքի հեռաւոր շերտերը ու բոյն դնելով այնտեղ՝ կամաց-կամաց, առանց նկատւելու, կատարել է այլասերման եւ օտարացման դործը . իրերի բերմամբ հայ գաղութը ընկնելով օտար միջավայր՝ սկզբում կարողացել է ծաղկեցնել իր հոգեկան ու նիւթական հանձարը, ազգային մշակոյթն ու ցեղային լաւ յատկութիւնները, բայց յետոյ, ժամանակի ընթացքում, անզօր օտար եւ հարուստ մշակոյթի հանդէպ, այլ եւ զրկւած սեփական ազգի մշտական բարոյական ու նիւթական օգնութիւնից՝ կորցրել է իր ուրոյն դէմքն ու առանձնայատկութիւնները :

Անշուշտ, այս երեւոյթը չի պատահել մի քանի տարւայ մէջ : Ազգային փոքր եւ օտար մեծ մշակոյթների միջեւ մղւող խուլ, անտեսանելի, բայց յամառ ու յարատեւ պայքարը շատ անգամ տեւել է տասնեակ տարիներ : Յաճախ երկու տարբեր մշակոյթները՝ ազգայինն ու օտարը ապրել ու զարգացել են զուգընթացարար, առանց արտաքուստ իրար յղթելու : Բայց երբ ազգայինը կարւել է մայր հողից, չի պաշտպանւել ու սնունդ չի ստացել, իսկ օտար մշակոյթը, ընդհակառակը, յենւած պետականութեան ու տնտեսական ոյժի վրա՝ աւելի ու աւելի զօրացել եւ զարգացել է, անխուսափելիօրէն աւելի թոյլ հայ մշակոյթը տեղի է տել ուժեղի առջև կամ ձուլւել է նրա հետ : Բնութեան մէջ շատ անգամ ստորերկրեայ մեծ եւ փոքր ջրերը ամբողջ գարեր հոսում են կողք-կողքի առանց խառնւելու, բայց մէկ էլ, բնութեան օրէնքների ազդեցութեան տակ, հոսանքը ներն միմեանցից բաժանող հողաշերտը պատառւում է եւ աւելի ուժեղ հոսանքը կլանում է միւսին : Նման վիճակի են ենթարկւել եւ

Ռուսաստանի հայ գաղթավայրերը՝ Պետերբուրգ, Մոսկվա, Աստրախան, Ղզար, Ղրիմ, իսկ վերջերս նաև՝ աղդային հոյակապ մշակոյթի հարուստ Նոր-Նախիջևանը:

Ռուսահայ մշակոյթի զարգացումը զարմանալի ուղիներով է ընթացել: Դեռ Թիֆլիսը, Երևանն ու Էջմիածինը հայ հոգեւոր կեանքի կենտրոններ չեն դարձել, որ ուսահայ մշակոյթը հիմնեց եւ ամրացաւ լայնածաւալ Ռուսաստանի հայ գաղթավայրերում: Մինչ Հայաստանը գեռ պատաժ էր խաւարով ու տղիտութեամբ, այստեղ ծագեց ու զարգացաւ հայ մշակոյթը: Այստեղ է որ հայ մտաւորականութիւնը արձարձեց աղգային նոր զաղափարներ՝ աշխարհաբարուի խնդիր, աշխարհիկ կենցաղ, համայնքի իրաւական հարցեր: Այստեղ ծնունդ առին աղգային մեծ դէմքեր, հայ ճեմարաններ, հայրենասէր բարերարներ ու մեկենասներ, աշխարհաբար նոր լեզւի քարոզիչներ, հետազայ սերունդների աղգային և մարդկային բարձր գաղափարների առաջին գիտակից կերտողներ ու զարրնողներ:

Հայրենիքից հեռու հաստատած այս գաղութների թուա առանձնայատուկ եւ մեծ տեղ է գրաւել Նոր-Նախիջևանը, որ աւելի քան հարիւր յիսուն տարիննը ամրացել և տպրում է հարաւային Ռուսաստանի Դոն գետի աջ ափին: Նրա պատմութիւնը յայտնի է: Գաղթած Շիրակ գաւառից, Բաղրատունիների անկումից յետոյ, հայութեան այս մասը մի քնի դար ապրեց ու ծաղկեցրեց Ղրիմ թերակղզին՝ պահելով իր նախնիքների լեզուն, կրօնն ու աղգային սովորութիւնները: Եւ 1779թ. Յովսէփի արք. Արզութեանի նախաձեռնութեամբ, կարելի է ասել րոնի, գաղթեց ու հաստատեց Հարաւային Ռուսաստանի գաշտերում, Դոնի եղերքին, հիմնելով Նոր-Նախիջևան քաղաքն ու հինգ զուտ հայաբնակ գիւղեր (Մեծ Սալա, Զալթըր, Փոքը Սալա, Թոփթի և Սուլբը Կարապետ կամ Նիսվիթա): Ռուս պետութիւնը, կամ ենալով սիրաշահել, նւիրեց նրանց 200 հազար հեկտարից աւելի հարուստ հող եւ արօտավայրեր, ինչպէս նաև քաղաքացիական լայն արտօնութիւններ (հայ գտարան, հայ քաղաքային վարչութիւն, անկախ պետութիւնից հոգեւոր կառավարութիւն, աղատութիւն դինորագրութիւնից եւ այլն):

Նոր գաղթավայրում այս ժիր եւ առոյդ բնակչութեան նիւթական ու հոգեւոր մշակոյթի զարգացումը ընթացաւ արագ քայլերով:

\*) Հետագային այս հինգ գիւղերին աւելացան Սամբէք աւանը եւ Սուլբ հաչ աւանը՝ համանուն վանքի կողքին:

Շինուեցյին քարէ տներ՝ մասնաւոր և հանրային պէտքերի համար, մի քանի հատ հոյակապ եկեղեցիներ. ստեղլեց ընտրովի հայ վարչութիւն՝ դատաստանական եւ քաղաքային «հասարակի» (հանրութեան) գործերի համար, հոգեւոր կառավարութիւն, ուսումնարան, վանք ու տպարան, իսկ հետազային՝ նաեւ թատրոն: Հողի մեծ մասը ժողովուրբը յատկացրեց ցորենի ու կաթնատնտեսութեան զարգացման: Քաղաքում ծնունդ առին բազմաթիւ արհեստանոցներ ու խանութներ, որոնց արտադրած տեղային ապրանքները լայն հռչակ ստացան Ծուսաստանի հեռաւոր անկիւններում: Ուուս եւ կողաք վաճառականները այցելում էին Նոր-Նախիջեւան, որպէս արեւելեան ապրանքների կենտրոնատեղի: Լայն համբաւ ստացաւ եւ հայ գիւղացիների արտադրած ցորենը՝ արտածւելով մինչեւ Մարսէլ, որտեղի վաճառականները յատուկ անուն էին տւել նրան՝ «Ելե արտօնութեան Տշալտիր» (Զալթըրի հայկական ցորեն): Ոչխարի իւզն ու բուրդը արտահանում էր հայկական նաւերով Սեւ Ծովի ափերը եւ այլ վայրեր, իսկ այնտեղից ներածւում էին զանազան ապրանքներ:

Բնականարար, տնտեսական բարգաւաճման զուգընթաց մեծ թափով զարգանում էր եւ հոգեւոր կեանքը: Նոր-Նախիջեւանից 6-7 քիլոմետր հեռաւորութեան վրա, հայ գիւղերի ճանապարհին, մի բարձր բլուրի կատարին, կառուցւել էր Ս. Խաչ վանքը՝ երկդասեան դպրոցով ու տպարանով: Արդէն 1793թ., երբ գեռ ամբողջ Անդրկովկասում չկար հայկական տպարան, Նոր-Նախիջեւանցիք մեծ զոհողութեամբ Ամսթերդամից բերել էին տւել հայերէն տառեր ու մամուլ եւ հիմնել սուսահայոց, ժամանակագրական կարգով, երկրորդ տպարանը\*), ուր տպւեցին ոչ միայն շարականներ ու սաղմուններ, այլ եւ հայ-թիւրք լեզւի բառարան ու «Տելեմաք»ի գրաբար թարգմանութիւնը: Այդ տպարանում տպւեցին Սերովիք վարժապետի (հետազում Սերովիք Պատկանեան) գրած ու մեծ ժողովրդականութիւն ստացած շարականները:

\*) 1783թ. զուղայեցի Գրիգոր Խալդարեանը հայկական տպարան հիմնեց Պետերբուրգում, ուր լոյս տեսան մի շարք հայերէն գրքեր, ի շարս որոց եւ Եղիշէի պատմութիւնը գեղեցիկ տպագրութեամբ: 1788թ. այդ տպարանը փոխադրեց Նոր-Նախիջեւանի Սուրբ Խաչ վանքը, ուր տպագրւեցին մի շարք արժեքաւոր գործեր: Ս. Խաչից տպարանը տեղափոխվեց Հաշտարխան: Այս երեք վայրերում հրատարակւեցին 20ից աւելի հայերէն գրքեր, կրօնա-քառյական եւ պատմական բովանդակութեամբ: ԽՄԲ.

Այս Սերովբէ վարժապետի ազդեցութիւնը Նոր-Նախիջեւանի մշակութային կեանքի վրա եղաւ մեծ եւ անջնջելի: Սրա նախնիքը 16րդ դարում Կարինից գաղթել էին Պոլս: Ինքը Սերովբէն կրթութիւն էր ստացել Վենետիկում Միլիթարեան հայրերի մօտ: Իր մտաւոր պահանջներին համապատասխան հանգիստ մինուրտ չգտնելով՝ անցել էր էջմիածին ու Թիֆլիս, իսկ այնտեղից՝ Նոր-Նախիջեւան: Հայկարան, ուսումնասէր ու բանաստեղծ՝ ճանձրացել էր կրօնաւորների երկապաւակութիւններից եւ երազում էր նւիրւել բանաստեղծութեան ու ուսուցչութեան եւ տենչում էր իր գրածները տպագրութեան տալ: Սերովբէ վարժապետ Պատկանեանից է սկսում Նոր-Նախիջեւանի հայ մտաւորականների, հայկաբանների ու հանրային գործիչների երկար շարքը:

Սերովբէի որդին էր Գաբրիէլ քահանայ Պատկանեանը, նոյնպէս մանկավարժ, հմուտ գրաբառադէտ եւ հարուստ երեւակայութեամբ օժտւած բանաստեղծ, որ թողեց մօտ հինգ հատոր գրաբար բանաստեղծական երկեր, գլխաւորապէս հայ դիւցազնական ու պատմական կեանքից գրւած քերթւածներ: Գաբրիէլի ազդեցութիւնը իր հայրենի քաղաքի մտաւոր կեանքի վրա շատ մեծ էր, բայց աւելի մեծ եղաւ նրա որդու՝ Ռափայէլի (Գամառ-Քաթիպայի) ազդեցութիւնն ու նշանակութիւնը ոչ միայն Նոր-Նախիջեւանի, այլ եւ ամբողջ հայ ազգի մշակութային կեանքի զարգացման հարցում: Մեծ էր նոյնպէս Սերովբէ վարժապետի միւս թոռ՝ Քերովբէ Պատկանեանի դերն ու տեղը հայ մշակոյթի համար: Սա արեւելագէտ եւ հայկարան էր ու հոչակւեց որպէս գիտնական ու Պետերբուրգի արքունական համալսարանի ուսուցչապետ:

Սերովբէի երրորդ որդին՝ Միքայէլ Պատկանեանը Թիֆլիս էր տեղափոխւել նորակառոյց Ներսիսեան դպրոցի ուսուցչութեան պաշտօնով: Այդ Միքայէլն էր, որ յիսնական թւականներին գրեց Թիֆլիսի իրական կեանքից վերցրած կատակերգութիւններ, Թիֆլի-

\*) Աւելորդ չենք համարում այստեղ յիշատակել եւ «Սարգիս Տիգրանեանց Նոր Նախիջեւանցի» բանասէրին, որ 1832թ. հրատարակեց գրաբար մի շատ լուրջ ուսումնավորութիւնի քատրոնի մասին (թեմի ու քատրոնական արւեստի վերլուծումը. մանրամասն տեղեկութիւն իին յունաց, անգլիական, սպանական, ֆրանսական ու գերմանական քատերագիրների հեղինակութիւնների մասին). Եթէ աչքի առաջ ունենանք, որ այդ գիրքը տպւած է 1832 թվին, կարելի է ասել, որ իր լուրջ բովանդակութեամբ ու վերլուծման եղանակով իր տեսակի գլուխ գործոց է հայ գրականութեան մէջ:

սի բարբառով, որ կատարեալ նորութիւն էր հայ գրականութեան համար: Նրա օգնութեամբ դպրոցի բեմի վրա աշակերտները տալիս էին հայերէն թատրոնական ներկայացումներ:

Սերովքէից յետոյ, որ տեղափոխւեց Աստրախան ու այնտեղի հոգեւոր դպրոցն էր զեկավարում, Նոր-Նախիջեւանի մշակութային կեանքին մղում տւողը եղան Յարութիւն վարդապետ Ալամտարեանը (բանաստեղծ եւ հայրենասէր) եւ Գաբրիէլ քահանայ Պատկանեանը: Վերջինս բացել էր մասնաւոր դպրոց եւ յատկապէս զբաղում էր հայերէնի (գրաբար) դասաւանդութեամբ: Նրա վարժարանից գուրս եկան Ռաֆայէլ Պատկանեան, Միքայէլ Նալբանդեանց, Խազէզեան, Ան Սուլթան-Շահ եւ ուրիշներ:

Նոր-Նախիջեւանի մտաւոր կեանքի հոչակը այնքան մեծ էր, որ քառասնական թւականներին Թիֆլիսից դիմում են այնտեղ եւ ինդրում Գաբրիէլ ք. Պատկանեանին՝ «Թողնել վոքրիկ Հայաստանը» եւ ստանձնել Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի վերատեսչութեան պաշտօնը: Գաբրիէլը տեղափոխուում է Թիֆլիս, որտեղ բացի տեսչութիւնից հիմնում է նաև «Արարատ» ամսագիրը, որի մէջ բացի իր գրաբար բանաստեղծութիւններից զետեղում է իր պատանի որդու՝ Ռաֆայէլի առաջին աշխարհաբար ոտանաւորները:

Յիսնական թւականներին Նոր-Նախիջեւանի մշակութային կեանքն այնքան մեծ քայլեր էր արել, որ երիտասարդ սերնդի մէջ արդէն ծնունդ էր առել հանրային շահերի պաշտպանութեան դաղափարը եւ առաջ էին եկել հասարակական շերտաւորումներ: Քաղաքի գիտակից խաւերը բաժանւել էին երկու հոսանքի՝ «խաւարամիտների» (Խալիկեան - Այլվազովսկի զեկավարութեամբ) եւ «յառաջադիմականների»: Այս վերջիններիս ոգեւորողն ու զեկավարն էր «Հիւսիսափայլ»ի աշխատակից երիտասարդ Միքայէլ Նալբանդեանցը, որ Նոր-Նախիջեւանից փոխադրւել էր Մոսկվա:

Նոր սերնդի ամենամեծ մտահոգութիւնն էր՝ հիմնել Նոր-Նախիջեւանում հայկական միջնակարգ դպրոց պետական իրաւունքներով, Մոսկվայի Լազարեան ճեմարանի ուրակով ու նշանակութեամբ: Նոր սերնդի գիտակից անդամները ալօս կերպով զգում էին արդէն, որ եթէ հայութիւնը թողնուի իր ճակատագրին՝ տեղական մանր-մունք շահերի մէջ ընկղմւած, անկարող կը լինի իր ազգային գէմքը պահպանել եւ մի 20-30 տարիներից յետոյ կոտարանայ ու կը կորչի հայութեան համար: «Հարկաւոր են հայ վարժարաններ»՝ այդ էր նշանաբանը ամենքի բերանին:

Ուծացման եւ օտարացման համդէպ ամենառուժեղ զէնքն էր — «յառաջլիմականների» համոզմամբ — լաւ գրւած հայ վարժարանը: Մի գործ, որի համար անհրաժեշտ էին մեծ գումարներ, մօտաւորապէս այն չափով, ինչ չափով որ Լազարեանները թողել էին Լազարեան ծեմարանի ապահովութեան ու բարգաւաճման համար: Բայց այդ գումարները Նոր-Նախիջեանում պակասում էին կամ չէին գտնուում: Եւ աչա Մ. Նալբանդեանցը նախաձեռնում է իր յայտնի ճանապարհորդութիւնը դէպի Հնդկաստան՝ աղատելու համար այն մեծ գումարները, որ վաթսուն տարի առաջ կտակել էին Հնդկաստանցի երկու հայ բարերարներ յօդուտ նորահաստատ Նոր-Նախիջեան քաղաքի ու հայ հասարակութեան: Անպատմելի դժւարութիւնների գնով Մ. Նալբանդեանցը յաջողեց ստանալ արդէն կորած համարւած գումարների մեծ մասը, որ հետազային յատկացւեց Ն. Նախիջեանի միջնակարգ դպրոցին:

Մինչեւ վաթսունական թւականների սկզբները Նոր-Նախիջեանն արդէն պատրաստ ունէր տասնեակ համալսարանաւարտ հայ երիտասարդներ, որոնցից յատկան երկուսը՝ Մ. Նալբանդեանցն ու Ռ. Պատկանեանը համազգային համբաւ ստացան: Այս երկու մեծ հայրենասէրների մտքերն ու զգացմունքները թափանցեցին աւելի ու աւելի լայն խաւեր ու հայկական հեռաւոր վայրեր: Վաթսունական թւականներից հայ գիրքը, հայ վարժատունը, հայ լրագիրն ու, մանաւանդ, հայ հայրենիքը՝ հայ գաղթավայրերի մշակութային ուրոյն գործունէութեան ծրագիրն էին կազմում: Նոր-Նախիջեանից եկած բարոյական ազգեցութիւնները այս հարցում անվիճելի են:

Մ. Նալբանդեանցի ողբերգական մահից յետոյ, երբ ինչ-ինչ պատճառներով գեռ չէր բացւել ծրագրւած միջնակարգ վարժարանը, Ռ. Պատկանեանը ահազգին եռանդով նւիրւեց մանկավարժական գործունէութեան. նա Նոր-Նախիջեանում հիմնեց «տղայոց եւ աղջկանց օրինաւոր վարժատուն», իսկ նրա կինը՝ «առաջին հայ մանկապարտէզը»: Որուսահայութեան համար նոր էր մանկապարտէզի դաղավարը. Պատկանեան ամուսինները գեռ վաթսունական թւականներին հասկացել էին, որ «երեխային ամենափոքը հասակից անհրաժեշտ է սովորեցնել հայերէն երգեր, հայ հեքեաթներ, աղգային խաղեր ու աւանդութիւններ»:

Որքան էլ առողջ հողի վրա հիմնած լինէր Նոր-Նախիջեանի մշակոյթը, բայց եւ այնպէս՝ շրջապատւած ոռւս օրէց օր հարստաց մշակոյթով, ապա եւ Ռուսաստանի յառաջընթաց տնտեսական ցող մշակոյթով,

ու քաղաքական կեանքով՝ կղզիացած այս փոքրիկ գաղութը ամէն քայլափոխին ենթարկւում էր օտար մշակոյթի «հրապոյրին»։ Պէտք էր մ'եծ ճիղ թափել եւ «հայր հայ պահելու» յարատեւ քաղաքականութիւն գործածել տիրող պետական օրէնքների վերաբերմամբ՝ զուտ կրթական-մշակութային ասպարիզում։ Եւ Ռ. Պատկանեան ձեռք ձեռքի տւած մի տասնեակ մտաւորականների հետ վճռում են գործել հայ մշակութային կեանքի տարբեր ճիւղերում, երազում են «Եոր Նախիջեւանը հայութեան մէջ պահել զոնէ յիսուն-վաթսուն տարի եւս, մինչեւ որ համեն, ո՞վ դիտէ, աւելի բարեպատեհ պայմաններ հայ աղքի համար»։

Արդարեւ, բանաստեղծի կողքին հանրային ասպարէզ են իշնում մի շարք երիտասարդ նախիջեւանցիներ, որոնք արդէն որոշ անուն ունէին՝ բժ. Ան. Սուլթան-Շահ (աշխատակից «Հիւսիսափայլ») եւ հեղինակ երգիծական «Լուսաւորեալք» կատակերգութեան), բժ. Յ. Բերբերեան՝ նոյնպէս աշխատակից «Հիւսիսափայլ» եւ հեղինակ գեռ 1858 թւականից «Սուածին Հայ Աշխարհաբար Այրուբենաբանի», Գ. Տէր-Գրիգորեան՝ իրաւագէտ եւ հայ երգերի թարգմանիչ ու տարածող երսպատկան ձայնանշաններով, ինչպէս եւ իտալական օպերաների թարգմանիչ եւ հրատարակող, Գէորգ Խաչատրեան՝ հայագէտ եւ մանկավարժ Ա. Խաղէզեան՝ Դորպատի նախիջն ուսանող եւ հրատարակիչ հայ երգերի, երիտասարդ քաղաքագլուխ Կ. Հայրապետեան՝ մեկնաս «Հիւսիսափայլ» և, սիրահար հայ թատրոնի, որ իր սեփական թատրոնական շէնքը նուիրեց հայ բեմին եւ Պոլսից մասուլաճեանի դերասանական խումբը բերել տւեց։ Այդ խմբի հետ եկաւ եւ երիտասարդ դերասան Պետ. Ադամեանը, որ գեռ կատակերգական դերեր էր խաղում, եւ միայն տաս տարի յետոյ պիտի հոչակւէր որպէս բեխաղում, եւ միայն տաս տարի յետոյ պիտի հոչակւէր որպէս բեխաղում հանձար։ Նախիջեւանցի երիտասարդների թւումն էր նոյնմական համար։ Պատկանեանը, որ յատկանէս ուսումնասիրել էր պէս եւ Քերովբէ Պատկանեանը, որ յատկանէս ուսումնասիրել էր իր հայրենի բարբառը եւ ներկայացրել արքունական համալսարակիր հայրենի բարբառը եւ ներկայացրել արքունական համալսարակիր հայրենի բարբառը եւ կեանքից։ Հետապային նա նշանակւեց նին, որպէս գիտական շարադրութիւն։ Հետապային նա նշանակւեց նոյն համալսարականի արեւելագիտական ճիւղում։ Նա ուսուցչապետ նոյն համալսարակի թւումն էր նոյն պէս եւ գ. Դողովիսեանը («Ծիծեռնակ»ի հեղինակը), որ քիչ նոյնական էր համոզից իր հօրեղբօր որդի Ռ. Պատկանեանին զբել նոր Նախիջեւանի բարբառով ժողովրդին մատչելի պատմութիւններ ու ուսանաւորներ իրական կեանքից։ Երիտասարդ դործիչների թւումն էր նոյնական էր գ. Դողովիսեանը («Ծիծեռնակ»ի հեղինակը), որ քիչ նոյնական էր նոր Նախիջեւանում ուսուցչութիւն անելուց յետոյ, ընդ-ժամանակ նոր Նախիջեւանում ուսուցչութիւն անելուց յետոյ։ Կային եւ միշտ տեղափակւեց Ղըմմ մանկավարժական պաշտօնով։ Կային եւ

ուրիշ դէմքեր\*): Ու սրանց ամենքի մտահոգութիւնն էր՝ հասնող սերնդին «Հայկական մթնոլորտ պատրաստել», եւ ամենքի հոգածութեան առարկան էր՝ գտնել միջոցներ, որ կզիացած գաղութի հայութիւնը չխեղդւի օտար ջրերում:

Հայրենիքից հեռու ամրացած հայութեան այս մտաւորականութեան գործունէութիւնը մերթ թուլանում, մերթ բարձրանում էր մինչեւ փարոս եւ վերածում էր հասարակական բուռն պայքարի, որ տարւում էր երկու ճակատի վրա. մէկը ներքին՝ «խաւարամիտների» դէմ, միւսը արտաքին՝ օտար կենցաղի, օտար լեզւի ներմուծման դէմ: Ժամանակի ընթացքում յաղթութիւնը առաջինների դէմ եղաւ կատարեալ, բայց «խաւարամիտների» պարտուելով՝ դաղութի ներքին երկապառակութիւնը չէր վերջանում: Ինչպէս միշտ՝ ներքին պառակտումները հանրութեան մէջ զարգացնում էին անտարբերութեան ոգին ու բարոյական քայլքայում, իսկ վերջինս, իր հերթին, պարարտ հող էր ներկայացնում դաղութահայի օտարացման համար:

Եօթանամնական թւականների ոռութիւրքական պատերազմը ուժգնօրէն ցնցեց հայ հանրային միտքը ամէն տեղ, բնականաբար, եւ Նոր-Նախիջեւանում: «Ազատ Երգեր»ի հեղինակը, որի խօսքը պատգամ էր հայութեան համար, ապրում է Նոր Նախիջեւանում եւ այդ փաստն ինքնին ազգում էր իր համաքաղաքացինների հայրենասիրական զգացմունքի վրա: Այդ տարիններից սկսած Նոր-Նախիջեւանցին թէեւ իր ազգային ապահովութիւնը փնտրում էր ընդհանուր հայութեան կեանքում, բայց երբեք աչքից չէր թողնում այն համոզումը, թէ իր սեփական մշակոյթով պիտի կարողանար դիմադրել «օտարի խաղաղ բնաջնջման քաղաքականութեան»: Այդ շրջանից՝ մէկը միւսի յետեւից սկսում են բացւել զանազան անւան տակ («Բարեգործական», «Մարդասիրական», «Հայուհեաց») ընկերութիւններ, որոնց գլխաւոր նպատակն էր ընթերցանութեան, կրթութեան ու հայ լեզւի տարածման ու ամրացման հարցը: Բժ. Տիգրանեանը, որ իր մեծ կարողութիւնը կտակել էր Գէորգէան ձեմարանին, հրատարակում է «Առածք, ասացեալք և սովորութիւնք Ն. Նախիջեւանոյ» գիրքը ու ձրի բաժանում իր համաքաղաքացիններին: Ժամի երէցփոխները իրար հետ մրցելով՝ հրաւիրում են «դրսեցի ուսեալ ու ազգասէր վարդապետներ» — եկեղեցու մէջ կիրակի ու տօն օրերը

\* ) Նոր Նախիջեւանից կովկաս գաղթած ու այնուեղ գործող՝ Պետրոս Սիմէոնեան («Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիրը), յայստի գրող եւ մանկավարժ Փիլիպ. Վարդանեանը:

«ազգային քարողներ» խօսելու համար (Մամբրէ, Կիւրեղ եւ այլ քարողիչ վարդապետներ) : Հիմնւում է «Թատրոնական Արևեստը Սիրողների Ընկերութիւն»ը, եւ հրատիրում է Պետրոս Աղամեանը, որ երեք ձմեռ մնալով նոր Նախիջեւանում՝ ահագին զարկ է տալիս գեղարւեստական կրթութեան եւ հայ լեզուի տարածման դործին: Նոր-Նախիջեւանի գաղութը չնորհիւ իր արեւմտահայ լեզուին, հեշտութեամբ հասկանում էր թրքահային եւ սիրում էր նրան, բայց յաճախ շփելով կովկասահայութեան հետ՝ հասկանում էր, որ հայրենիքը սկսում է Արարատի ստորոտներից ու Մշոյ սուլթան Սր. Կարապետից :

Իր պահած ազգային ու տեղային սովորութիւններից ու աւանդութիւններից նոր-Նախիջեւանցին սիրում էր առանձնապէս հետեւեալները. կտրիձները ձի էին նստում եւ ուխտ գնում Սուրբ Կարապետ՝ անցնելով Թիֆլիս, Երեւան ու Էջմիածին: Ճանապարհորդութիւնը տեսում էր 2-3 ամիս: Վերադառնալուց յետոյ պսակում էին իրենց ընտրած աղջիկների հետ: Այդ սովորութիւնը առիթ էր տալիս ի մօտոյ ծանօթանալու կովկասի ու Հայաստանի հայկաթեան եւ մշտական բարոյական կապ հաստատել հայրենիքի հետ:

Մեծ գուրգուրանք էր ցոյց տալիս Նոր-Նախիջեւանցին Վարդանանց տօնին ու Վարդան Մամիկոնեանի անձնաւորութեան. Հանդէսները ու ներկայացումները վարժարաններում ու թատրոնում վարդան Մամիկոնեանի կեանքից ամէն տարի խուռն բազմութիւն էին բերում: Կար եւ մի այլ հին սովորութիւն, որ մեծերի աջակցութեամբ երեխաններն էին գործածում. աշնան ամիսներին փոքր տըղայք «սախախուցի», «պիւլպիւլ» եւ այլ երգող թռչնիկներ էին բոնում եւ պահում էին վանդակներում: Երբ գալիս էր գարունը, Զատկի առաւօտը, ուուրս էին հանում վանդակը եւ թռչուններին ազատութիւն տալիս: Վանդակի գոները բանալիս՝ տղայքը ասում էին. «Դէ՛, գնա՛ ծիծեռնակ, ծնած տեղդ Աշտարակ», իսկ մեծ հայրը կամ մեծ մայրը շնչում էր. «Ազատեա զմեղ մարդասէրն Աստած»:

Այս հին սովորութիւնը, մանաւանդ, ամուր պահպանում էր Մ. Նալբանդեանցի ընկերների ընտանիքում, երեւի կամենալով յիշել մեծ հայրենասէրի բանտարկութիւնը՝ մտաբերելով, որ նա եղել է ազատութեան երգիչը:

Նոր-Նախիջեւանի գաղութի լայն խաւերի ազգային տօներն էին. «վարթեւօրը», «վիճակի օրը», «խաղող օրհնէնքը», «կաղանդը», «Տէր Մեղան», «Լուսաւորիչի օրը» եւ այլն:

ջեւանի նոր սերունդն էր ասպարէզ իջել: Սրա գիտակից անդամներն արդէն տեսնում էին հայութեան ուրիշ եւ հեռաւոր հորիզոններ: «Հ միայն հայրենիքի ազատութեան ազօտ հարցն էր դրւած նրանց առջեւ, այլ եւ նրա կատարեալ անկախութեան անհրաժեշտութիւնը: Ամրանում էր նոյնական այն միտքը, թէ մօտակայ ապագայում կազաւի ոչ միայն թիւրքահայաստանը իր քաղաքական լծից, այլ եւ ոռուսահայ գաղութիւնները՝ օտարացումից: Նոր-Նախիջեւան քաղաքը այդ ժամանակները ունէր 30 հազար բնակիչ, որի միայն երկու-երրորդ մասը հայեր էին: Ծնորհիւ այն բանի, որ հայկական հարցը դարձել էր օրւայ հրատապ խնդիրը, Նոր-Նախիջեւանի գաղութիւն եւս իրեն զգում էր աւելի սերտօրէն կապւած հայ ազգի, հայրենիքի ու հայութեան գաղափարի հետ: Քաղաքի ղեկավարութիւնը դեռ հայերի ձեռքին էր. քաղաքային վարչութիւն եւ խորհուրդ, քաղաքագլուխ, բաղմաթիւ ընկերութիւններ՝ գրամատուն, հրատարակչական, արևեստագիտական եւ այլն՝ հայերի ձեռքին էին եւ հայերն էին այդ կազմակերպութիւնների նախաձեռնողը, ստեղծողը, կառավարողն ու շէնացնողը: Այդ շրջանին եւ հետագայ քանի տարիների ընթացքում հայ կեանքի զանազան ճիւղերում դործող բաղմաթիւ երկիրական գուրս եկան: Նշմարելին այն էր, որ սրանք կապւած էին տարբեր քաղաքական հոսանքների հետ, բայց մշակոյթի ասպարէզում գործում էին համերաշխ:

Բաւական է յիշել հետեւեալ անունները՝ հանրային գործիչներ ու գրողներ՝ Գէորգ Չուրար, Մինաս Բերբերեան, Գր. Զալխուշեան, Ալ. Մեասնիկեան, արևեստագէտներ՝ Կուսիկեան, Արրահամեան, Գր. Շիլթեան, ակադ. Ա. Թամանեան, բժիշկներ, իրաւաբաններ ու գիտնականներ: Բայց միայն քաղաքը չէր, որ գիտակից սերունդ էր պատրաստել: Քաղաքը ըրջապատող հայ դիւղերն եւս ոկսել էին տալ ազգային ու հանրային գործիչներ, ինչպէս՝ Գ. հով. Զեօրէքնեան, Յուս. Եպ. Զոհրապեան, Ա. Վրացեան, Համ. Տէրտէրեան, Նկարիչ Մարտիրոս Սարեան, Ս. Սրապիոննեան (Լուկաշին), Զուրար եւ ուրիշներ:

Մեր ասածները ամփոփենք մի քանի թւական տւեալներով Նոր-Նախիջեւանի հայ գաղութիւն տնտեսական, բարոյական ու մտաւոր կեանքի մասին: Հարաւային Ռուսաստանի խորհրդայնացման նախօրեակին Նոր-Նախիջեւանի բարեգործական հաստատութիւնները («Մարդասիրական», «Հայուհեաց», «Եկեղեցական» եւ ուրիշ) մեծ գումարներ էին կուտակել, որոնց տոկոսով կրթութիւն էին ստանում հարիւրից աւելի ուսանողներ Ռուսաստանի եւ արտասահմանի համալարաններում: Նոյն գումարների տոկոսներով պահում

էին գաղութի մի քանի ուսումնարանները։ Տեղացի հարուստ հայերից շատերը, իսկ յաճախ եւ այն հայերը, որոնք տարիներ առաջ հաստատել էին Ռուսաստանի հեռաւոր վայրերը, կտակում էին իրենց ինչքը Նոր-Նախիջեւանի Բարեգործական Ընկերութեան կամ «Եկեղեցական Հոգաբարձութեան»։ Այս վերջինիս պատկանում էր Ռուսակում կառուցւած «Հայ Եկեղեցական Հոգաբարձութեան Տուն» ունունով հինգյարկանի հոյակապ շինքը, որից ստացւած եկամուտը յատկացւում էր կրթական գործին։ Բարեգործական Ընկերութիւնը, բացի իր անմիջական պարտականութիւններից, ամէն տարի գումարներ էր յատկացնում նաեւ հրատարակչական գործին։ Հրատարակեց՝ Ռ. Պատկանեանի Գ. Հատորը, Մ. Նալբանդեանցի երկու հատորը, գիտական-ժողովրդական, բժշկական եւ առողջապահական գրքոյներ, օժանդակում էր ուրիշ հրատարակչական ձեռնարկութիւնների։ Ծրագրւած էր «Համազգային Ֆոնդ Հայ Գրողների Օդնութեան», որ չիրագործեց մեծ պատերազմի ու հետազայ արհաւիրքների պատճառով։

Նոր-Նախիջեւանի հայութեան տնտեսական կեանքի վերաբերմամբ վիճակագրական տւեալները շատ թերի են, բայց եւ այնպէս կարելի է տալ հետեւեալ թւերը։ 1) Վաճառականութեան եւ արտահանութեան շրջանառութիւն 7 միլիոն ոսկի բուբլի։ 2) Անասնապահութեան եւ երկրագործական, քաղաքը եւ հինգ հայ գիւղերն ու աղարակները՝ 5 միլիոն ոսկի բուբլի։ 3) Գործարանային արդիւնագործութիւն՝ 3 միլիոն ոսկի բուբլի ու հայերին պատկանած հետեւեալ գործարանները՝ 6 իւղի գործարան, 15 աղիւսի, 2 կաշի, 2 բամպակի, 2 փայտի, 3 ալիւրի ու հացեղէնի, 1 քիմիական գործարան, 3 գինեգործարան, 2 պանիրի ու կարագի, 1 բուրդի գործարան եւ այլն, որոնց տարեկան շրջանառութիւնը հասնում էր մօտ տաս միլիոն ոսկի բուբլու, ու ամբողջը միասին 25 միլիոն ոսկի բուբլի կամ մօտաւորապէս երկու եւ կէս միլիոն անգլիական ոսկիի տնտեսական կեանքի տարեկան շրջանառութիւն։

Իսկ ցոյց տալու համար, թէ ի՞նչ չափով՝ Նոր-Նախիջեւանի գաղութը ընթանում էր հայ մշակոյթի զարգացման ճանապարհով՝ գաղութը ընթանում էր հայ մշակոյթի զարգացման ճանապարհով՝ բաւական է այսուղ բերել ցանկը այն զուտ հայկական վարժարանների, որտեղ կրթութիւն էր ստանում երկու սեռի հայ աշակերտութիւնը (նախնական եւ միջնակարգ)։

1. Թեմական գլուխ (9ամեայ),
2. Ռւթղասեան իգական գիմնազիոն (Գոգոյեան),
3. Աւհակ - Մեսրոպեան քաղաքային դպրոց,

4. Մանդուխտեան աղջկանց դպրոց ,
5. Հոփիսիմեան աղջկանց դպրոց ,
6. Համբարձման ծխական դպրոց ,
7. Ս. Թողոսի ծխական դպրոց : Այս եօթ դպրոցները ունեն իրենց սեփական քարէ շէնքերը :
8. Մանկապարտէզ — մասնաւոր ,
9. Մանկապարտէզ — քաղաքային ,
10. Արհեստաւորաց դպրոց :

Այս դուր հայկական դպրոցներից զատ կային՝ իգական Գիմնազիոնն, Բարիեանի մասնաւոր դիմնազիոնը, քաղաքային դպրոց , երաժշտական դպրոց , Գեղարվեստից վարժարան եւ այլն : Հայ աշակերտներ կային եւ Ռուսովիլի պետական եւ մասնաւոր դպրոցներում , ինչպէս Տիկ . Թ. Բերբերեանի դիմնազիոնը , Տիկ . Բ. Տէրտէրեանի դպրոցը եւ այլն :

Դպրոցներից զատ կային մի շարք մշակութային կազմակերպութիւններ —

1. Թատերական Արեւստ Սիրողների Ընկերութիւն ,
2. Բնական Գիտութիւնների ջատագով Ընկերութիւն ,
3. Հայ երաժշտութիւնը Սիրողների Ընկերութիւն ,
4. Քաղաքային թատրոն եւ այլն :

Այլ եւ քաղաքային մատենագարան , որտեղ հաւաքւած կային ժօռ երեսուն հազար հայերէն ու ոռւսերէն գրքեր : Նոր հիմնւած «Միք . Նալբանդեանցի Թանգարան» (աեղափոխւած 1922ին Երեւան) :

Հայ աշակերտութեան թիւը անցնում էր 2000ից , առանց հաշւելու մայրաքաղաքների համալսարանների եւ բարձրագոյն ուսումնարանների նորնախիջեւանցի ուսանողութիւնը :

Այսքանը միայն քաղաքում : Գիտերից՝ Մեծ Սալայում կար արական վեցդասեան եւ իգական չորսդասեան դպրոց , այլև իգական պլոդիմնազիա ու տղայոց արհեստաւորաց վարժարան : Կար երկրագործական համագործակցական ընկերութիւն , դրամատուն , սպառապահ կօօպերատիւ եւ այլն : Զալթըրում՝ երկու դպրոց , Թոփիթիւն՝ երկու դպրոց , Փոքր-Սալայում , Նիսլիթայում , Սուբբ-Խաչ եւ Սամբէք աւաններում՝ մէկական դպրոց : Կային նաեւ սպառողական եւ վարկային ընկերութիւններ : Գիտերը բաւական մեծ թւով աշակերտներ էին տալիս նոր-Նախիջեւանի պետական դպրոցներին ,

ինչպէս նաեւ Ռուսակի եւ ուրիշ քաղաքների միջնակարդ եւ բարձրադրոյն վարժարաններին :

Վրա հասաւ մեծ պատերազմի շրջանը, ապա՝ ռուսական յեղափոխութիւնը (1917), երբ ընկաւ միասին կարգը եւ հաստատւց «Ժամանակաւոր Կառավարութիւն»ը : Այդ օրից, մինչեւ խորհրդային իշխանութեան հաստատելը վերացւեցին քաղաքային եւ ազգային բոլոր կաշկանդումները եւ Նոր-Նախիջեւանն էլ՝ շրջակայ հայարնակ գիւղերով ստացաւ կատարեալ ազտութիւն բոլոր ազգային-մշակութային հարցերում : Օգտելով նոր պայմաններից՝ գաղութի բնակչութիւնը եւ սրա հետ բոլոր հայ կուսակցութիւնները մշակութային կեանքի հետ կապւած բոլոր հարցերի հոգատարութիւնն ու զեկավարութիւնը կենտրոնացրին մի հեղինակաւոր մարմնի ձեռքում : Գաղութի բնակչութիւնը ընդհանուր, երկսու, գաղտնի քւէարկութեամբ ընտրեց «Նոր-Նախիջեւանի Համայնական Խորհուրդ»՝ բաղկացած 60 անդամից, որից երեքը կին : Ուժերը այդ Խորհրդում բաժանւում էին այսպէս . 26 գաշնակցական, 24 ազտամիտ-սահմանադրական, 7 սոցիալիստ-ժողովրդական եւ 3 անկուսակցական\*): Քստ ծրագրի «Համայնական Խորհուրդը» շուտով դարձաւ ոչ միայն տեղական հայ գաղութի, այլ եւ ամբողջ Հարաւային Ռուսաստանի ցրւած հայ գաղթավայրերի մշակութային հարցերի կենտրոնացնողն ու արտայալութիւնը, իսկ տեղական եւ կենտրոնական ոռու կառավարութեան առաջ այդ վայրերում ցրւած հայերի նիւթական ու հոգեւոր շահերի պաշտպանը :

Նոր-Նախիջեւանի Համայնական Խորհուրդը ստեղծեց իր «Համարչութիւնը» եւ ունէր իր պաշտօնական «Հայ Համայնք» շաբաթաթերթը (գրական-քաղաքական եւ հանրային) : «Համայնական Խորհրդի» բարոյական նշանակութիւնը այնքան մեծ էր, որ հանդիպաւոր բացման օրը անձամբ եկել էին շնորհաւորելու օտար հիւպատութեան եւ ոռու նահանգական իշխանութեան ներկայացուցիչը, որոնք իրենց ողջոյնի խօսքի մէջ ուրախութիւն ու գոհունակութիւն ուրոնք իրենց ողջոյնի խօսքի մէջ ուրախութիւն ու գոհունակութիւն այստեղին, թէ «եթէ մեկուսացած հայ գաղութը, հակառակ նախկին կառավարութեան կաշկանդումներին, կարողացել է հարիւր յիկին կառավարութեան ապահովական կեանքով, իր ազգային գէմքը եւ սուն տարիներ ապրել ազգային կեանքով, իր ազգային գէմքը եւ մշակոյթը պահպանել ու զարգացնել, այսուհետեւ, Ռուսաստանի քաղաքական ազատ մթնոլորտում, աւելի եւս պիտի կարողանայ

\*) Համայնական Խորհրդի նախագահին էր սոյն յօդւածի հեղինակը՝ պ. Ռ. Բերբերեանը : ԽՄԲ.

ծաղկեցնել ու հարստացնել իր ազգային ու ցեղային բոլոր լաւ յատկութիւնները. անցեալը երաշխիք է ապագայի համար . . .»:

Դժբախտաբար, այս թափն ու վերելքը երկար չտեւեց: Խորհրդագային իշխանութեան հաստատումով՝ ամէն ինչ խորտակւեց: Ու այսօր Նոր-Նախիջեւանի հայութիւնից եւ իր հոյակապ նիւթական եւ հոգեւոր մշակոյթից մնացել է միայն այն ինչ որ կարող էր մնալ ովկիանոսի կատաղի փոթորկից յետոյ. Հայ ազգային, հանրային ու քաղաքական բոլոր կազմակերպութիւնները լուծւեցին: Աչքի ընկնող հանրային գործիչները ձերբակալւեցին, կամ զնդակահարւեցին: Հայ գալրոցները փակւեցին, իսկ ինչ որ մնաց՝ յատկացւեց բոլչեւիկեան քարողչութեան: «Հայ Համայնական Խորհուրդը» լուծւեց, իբրեւ «ազգային-բուրժուական վիճասակար հաստատութիւն»: Բարեգործական հաստատութիւնների գրամներն ու գոյքերը գրաւեցին: Գրաւեց քաղաքի հողն ու գրամագլուխը: Ազգային-եկեղեցական հաստատութիւնները փակւեցին: Հայ հանրային եւ ազգային, ինչպէս եւ մասնաւոր հարստութիւնները «պետականացւեցին»: Մի խօսքով՝ քաղաքի հայ բնակչութիւնը, թէ իբրեւ համայնք եւ թէ որպէս մարդ, դարձաւ իրաւագուրկ, սեփականազուրկ, ընկաւ յետին թշւառութեան մէջ, փոշխացաւ ու փչացաւ:

Նոյն գառն ճակատագրին մատնեց եւ գիւղերի աղդաբնակութիւնը, որի խոշոր մասը, իր հարստութեան հետեւանքով, յայտարարւեց օրէնքից գուրս, իբրեւ կուլակ: Սրանց անձնական, ինչպէս եւ հասարակական հարուստ հողերն ու արօտալայրերը, «չխարի հարուստ հօտերը, եղջիւրաւոր անասունները, ձիերը, երկրագործական մեքենաներն ու գործիքները գրաւեցին, սովորողի ու կոլխոզի վերածւեցին ու փչացան: Շատ գիւղացիներ, իբրեւ կուլակ, զշկեցին Սիբիր, կամ հիւսիսային նահանդները: Գիւղացիութիւնը խորտակւեց տնտեսապէս ու մշակոյթով:

Ու այսօր, 13 տարիներից յետոյ, երբեմնի հոյակապ ու հոչակաւոր «Նոր-Նախիջեւան» անունն իսկ վերացւած է եւ քաղաքը միացւած է Ռուսովին՝ ստանալով Պրոլետարական Ռայոն անունը: Նախկին ազգային սերնդի մեծ մասը մեռած է կամ տարագրւած օտար վայրեր. նոր սերունդը ամբողջովին ուժացած ու այլասերւած է: Եւ եթէ հայութիւնը դեռ պահւել է, այն էլ, մեծ մասամբ, քաղաքի հասակաւորների ու ծերերի շրջանում կամ գիւղերում: Նոր սերունդի համար հայ խօսքը, հայ երդը, հայ ազգային աւանդութիւններն ու դէմքերը օտար են եւ կորած:

Ի՞նչ մնաց՝ երէկւայ չէն ու փարթամ հայ գաղութից: Նոր-Նախիջեւանից վեց-եօթ քիլոմէթր հեռու, բարձր բլուրի վրա կան-

դուն է դեռ նակախն Սբ. Խաչ վանքը: Ամայի է, բայց նրա բակում  
կան շիրիմներ, որ այնքա՞ն մօտ են հայութեան սրտին: Երկու  
յուշարձաններ նայում են դէպի հարաւ՝ դէպի հայրենի քաղաքը:  
Մէկ յուշարձանի վրա փորագրւած են «Ազատն Աստւած այն օրից»ի  
խօսքերը: «Մեր Հայրենիք»ի հեղինակն է թաղւած այդ շիրիմի  
տակ: Նրա կողքին հանգչում է Հայոց Ազգային Բանաստեղծը՝ Ռա-  
վայէլ Պատկանեանը: Գեղեցիկ պղնձէ ու մարմարեայ արձանի  
վրայից նայում են երկու խորաթափանց, բայց վշտալի աչքեր ու  
ասես անձայն կրկնում են արձանի վրա փորագրւած տողերը՝

Ի՞նչս մընաց այն օրից,  
Ո՞ր ջըրամօտ գեղեքս,  
Ո՞րը իմ շէն քաղաքից,  
Ո՞ր քերկրալի տեղերս...  
• • • • • • • •  
Շատերն ինձ են ատելի,  
Շատերին՝ ես օտար եմ...

Ու այսպէս, հարիւր յիսուն տարւայ շքեղ կեանքից յետոյ, մեր  
աչքի առաջ մեռնում է նոր-նախիջեւանի երթեմնի շէն, հոյակապ,  
իր մշակոյթով հարուստ հայ դադութը...

Փարիզ

